

ԱՆՍՏՐՈՎ ԱՄՇՏՈՅ ՆՈՒՆՅԱՆ 1600-ԵԱՅԵԱՐ ԵՌՄԻՎ

ՄԱՇՏՈՑԱՆ ԳՐԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայկ. ՍՍԻ ԳՍ. ակադեմիկոս Ա. Գ. ՀԻՎԼԱՆՆԻՍՅԱՆ

IV դարի վերջերին և V-ի սկզբներին, երբ հայ ղեկավար շրջաններում հասունացել ու գործնական լուծում էր ստանում նոր գրեր ստեղծելու հարցը, քրիստոնեությունը, որ ավելի քան մի դարի անցյալ ուներ Հայաստանում, դեռ իրար արմատներ չէր ձգել հայ ժողովրդի գիտակցության մեջ: Նոր կրոնի «սիրո և եղբայրության» քարոզը լույս արձագանք էր գտնում մի երկրում, որ Պարսկաստանի և Հռոմի Արևելյան հատվածի՝ ապագա Բյուզանդիայի միջև պետականորեն մասնատված, օրորվում էր դեպի Արևմուտք կամ Արևելք կողմնորոշված ու իրար դեմ լարված նախարարական տների միջև:

Քանի դեռ կանգուն էր և ուժի մեջ Մեծ Հայքի անբաժան թագավորությունը՝ Արշակունի թագավորները մի հայտնի չափով կարողանում էին զսպել ֆեոդալացիական բուռն պրոցեսի մեջ ներգրավված նախարարական տների իրարամերձ ձգտումները: Սակայն երկրի մասնատումից հետո հայ թագավորական իշխանությունը շուտով իսպառ վերացվեց Հայաստանի հունական մասում և գրեթե միայն անվանական՝ գոյություն էր քաշ տալիս նրա պարսկական մասում: Պարսից արքունիքը տարբեր արտոնություններով ու պարգևներով սիրաշահում էր նրանց՝ ջանալով նրանց հեռու պահել երկրի վերամիավորման և հայոց հիս իշխանությունը վերականգնելու մտքից: Գլխավոր այն գործոնը, որ ջանում էր ելք գտնել այս իրավիճակից, հայ եկեղեցականներն էին: Առաջին հերթին այդ միջավայրում էր հենց, որ հասունացավ հայոց գրերի ստեղծման գիտակցությունը: Բայց նշեցինք արդեն, որ այդ գործոնը ևս ազդեցության ամուր հենարան չունեւ երկրում: Պարսիկների կամ հույների քայքայիչ միջամտումների կամ նախարարական տների ներհակ գործողությունների դեմ համախմբող ու միացնող ուժ դառնալու համար քրիստոնեական եկեղեցին պետք է որ գեթ քաղաքականորեն միակամ գործոն հանդիսանար: Բայց քանի դեռ հտնված չէին հայոց գրերը և հայ, հույն, ասորի և քրիստոնեական մյուս եկեղեցիների միջև դավանաբանական խտրանք չկար, քրիստոնեությունը Հայաստանում քարոզվում էր ոչ միայն հայ, այլև Բյուզանդիայի կողմը տաշող հույն եկեղեցականների կամ Պարսկաստանի օգտին կողմնորոշված ասորի քարոզիչների բերանով: Պարսից արքունիքի օժանդակությամբ վերջիններից մի քանիսր բազմելու էին նույնիսկ Հայաստանի՝ կաթողիկոսական դահլին:

Նոր կրոնը, որ միջոց պիտի լինեւ եկեղեցու գաղափարական ազդեցության տարածման, Հայաստանում քարոզվում էր շինականների և նախարարների բաղմունությամբ անհասկանալի լեզվով՝ հունարեն կամ ասորերեն: Հեթանոսու-

թյունը իբրև աշխարհայացք և պաշտամունք ուժեղ էր բավականին, և Փապստոսի այն խոսքը, թե քրիստոնեությունը չէր հետաքրքրում ազնվականին ու շինականին, ճշմարտության մեծ բաժին ունի իր մեջ: Շինականներն ու ազատները անտարբերությամբ էին հետևում եկեղեցու արարողություններին ու քարոզներին: Քչերն էին միայն, որոնք փոքր ի շատե ծանոթ էին հունական կամ ասորի գրագիտության և գեթ մասամբ հասկանում էին նոր կրոնը:

Կային հարկավ հայ եկեղեցականներ, և զրանցից մեկն էր Մաշտոցը, որոնք կարգում էին ասորերեն և հունարեն գրքերը և տեղի ու տեղը թարգմանում ժողովրդին: Բայց սա հոգնեցուցիչ մի աշխատանք էր, որից ազատվելու համար պետք էր գտնել շուտափույթ հնար:

Հայոց գրերի գյուտին ժամանակամերձ աղբյուրները — Կորյուն, Փարպեցի, Խորենացի — հայ ժողովրդի պատմության շրջադարձային այդ ձեռնարկության շարժառիթը տեսնում են Հայաստանում նոր կրոնն արմատավորելու պահանջի մեջ: Մաշտոցը առաջիններից մեկն էր կամ առաջինը, որ գիտակցեց հասունացած պահանջիս ընդառաջելու անհրաժեշտությունը և իրեն հատուկ եռանդով ու վճռականությամբ անձնատուր եղավ գտնելու խնդրի լուծումը:

Մաշտոցը մենակ չէր, նա ուներ ազգեցիկ գործակիցներ և համախոհների որոշ շրջան: Նրա կենսագիր Կորյունի կրոնական հայացքների համար բնորոշ է այն միտքը, թե մաշտոցյան գյուտի միջոցով «աստծու պատվիրանների շնորհ» հայ ժողովրդի համար բխեց «Արարատյան գավառում, թագավորների նստավայրում». այլ խոսքով երկրի այս կենտրոնում, որի հետ նվիրագործված ավանդությունը կապում էր էջմիածնի սկզբնավորման լեգենդը: Պետք է այնուամենայնիվ փաստ համարենք, որ գրերի գյուտի գաղափարը հասունանում էր առավելապես եկեղեցականների միջավայրում, և Հայաստանի քաղաքական ու եկեղեցական կենտրոնում նստած Սահակ Պարթև կաթողիկոսը այն անձնավորությունն էր հենց, որը մեծապես աջակցեց Մաշտոցի հետամտած նպատակի իրագործմանը:

Մաշտոցի գործունեության հետևանքների ընթացքը նույնքան լայնահուն է և բովանդակալից, որքան հայ ժողովրդի պատմական բախտը: Անհնարին է, մանավանդ, թերագնահատել այն իրողությունը, որ հայոց գրերի գյուտը ելակետ դարձավ V դարի կեսերին հայ ժողովրդի վարած ազատագրական մարտերի հետ: Բայց չի կարելի հայոց գրերի ստեղծման մտահղացումը կամ դրա առաջացման հանգամանքներն ու շարժառիթները բացատրել գյուտի ունեցած հետևանքներով: Զի կարելի պատմական հետազոտությունները հեռավոր Մաշտոցի դարաշրջանը և դրա լույսի տակ իմաստավորել գյուտարարին ոգեշնչած նպատակը:

Կասկած չկա, որ Մեծ Հայքի 387 թ. բաժանումը բացասաբար անդրադարձավ հայ ժողովրդի ընդհանուր կացությանը և ի վերջո էթնիկական դիմահեղման սպառնալիք ստեղծեց նրա համար: Սակայն Մաշտոցի ժամանակակիցները ցավագնորեն չէին ընկալում այդ սպառնալիքը, ինչպես ընկալելու էին նրա հետևորդները: Մեր ձեռքի տակ չկան աղբյուրներ, որոնցից երևար, թե 428 թ., երբ Հայաստանի Արևելյան բաժնում ևս վերացավ Արշակունյաց թագավորությունը, անցքերի անմիջական վկաններն այդ փաստերի մեջ արդեն իսկ նշմարում էին հայ ժողովրդի գոյությանը սպառնացող վտանգը:

Եթե մի կողմ թողնենք գրերի գյուտին նպաստած լինելու համար բարի անուն վաստակած Վռամշապուհին, վերջին Արշակունիները սիրված չէին ոչ

նախարարների և ոչ իսկ ժողովրդի կողմից: Սոսկական մարզպաններից ավելի իրավունքներ չունեին նրանք և ըստ էության հանդիսանում էին սոսկ արքայից-արքաների կամակատարները: Հայ ժողովրդի հիշողության մեջ նրանք չեն թողել շոշափելի ուրե՛ հետք:

Դեպքերից կես դար անց Փարպեցին զայրույթով էր հիշատակում Արշակունյաց դահի վերացման մասին, բայց և մոռացության չէր տալիս Արշակունյաց տան գլխին կախված ներսես Պարթևի բախտորոշ անեծքը: Փարպեցին դիտեր, որ եթե Հայաստանի անկախության վերացումը մի կողմից հետևանք էր հույն և պարսիկ իշխողների քաղաքականության, մյուս կողմից անխուսափելի դարձավ նախարարների եսակենտրոն նկրտումների պատճառով: Պատմիչը վկայում է, որ Արտաշես Արշակունի թագավորին պարսիկները գահնկեց արին և դրա հետ մեկտեղ վերջ դրին նրա տոհմի իշխանությանը նախարարների իսկ խնդրանքով:

Մի այլ հեղինակ՝ Եղիշեն գրում է, որ Արշակունյաց թագավորությունը վերանալուց հետո երկրի իշխանությունը փաստորեն անցավ հայ նախարարական դասին. թեպետ և հարկը հղվում էր պարսից արքունիքին, սակայն նախարարներն էին, որ պատերազմ էին առաջնորդում երկրի հեծելազորը, ասում է նա: Մասնավածապաշտությունը բաց ճակատով և ինքնիշխան փայլում էր Հայոց աշխարհում, արքայից-արքա Շապուհի թագավորության սկզբից մինչև Վուսմի որդի արքայից-արքա Հազկերտ II-ի առաջին տարին»:

Եղիշեի նշած ժամանակամիջոցը ընդգրկում է Մաշտոցի գործունեության ամբողջ ժամանակամիջոցը:

Նվիրվելով քրիստոնեական գաղափարների քարոզչությանը՝ Մաշտոցն ըստ երևույթին հետամուտ էր հայ ժողովրդի հոգևոր-մշակութային ինքնորոշմանը և չի երևում, թե դրանով անմիջական նպատակ էր դնում դիմադրության պատրաստել իր ժողովրդին պարսից տերերի կամ սրանց ծառայող հայ վասալների դեմ:

Գրերի գյուտին նվիրած իր տեսությունը հորենացին սկսում է այն դիտողությունից, որ երբ Մեսրոպը (Մաշտոցը) տեսավ, թե հասել է հայոց թագավորության վերջը՝ նա «համբերության նյութ դարձրեց» հայոց աշխարհում ծագած խռովությունները, երես դարձրեց աշխարհային զբաղմունքներից ու մարմնական պատիվներից և «գնում էր երկնավորի հետևից»: Կորյունի վրա հիմնված հորենացու այս միտքը չի վկայում այն մասին, թե հայոց թագավորության հոգեվարքը Մաշտոցի հոգում սանձազերծում էր քաղաքական դիմադրության պահանջ:

Ուշագրավ է, որ ինչպես գրում էր Փարպեցին, գրերի գյուտով զբաղված եկեղեցականները անգամ Վոսմշապուհ թագավորին էին կամենում համոզել, թե հայոց գրերը ավելի անմոռանալի հիշատակ կլինեն նրա անվանը այս աշխարհում և վայելքի ավելի մեծ աղբյուր երկնքում, քան թագավորական այն գահը, որի վրա նա բազմած է:

Հնագույն աղբյուրները միաբան վկայում են, որ Վոսմշապուհ Արշակունի թագավորը եղել է հայոց գրերով հետաքրքրվողներից մեկը և ըստ ամենայնի օժանդակում էր Մաշտոցին: Չենք ուզում կասկածել, որ հայոց թագավորը շահախնդիր կողմ էր ոչ միայն որպես բարի մարդ ու բարի քրիստոնյա, այլև որպես քաղաքական գործիչ: Կասկած չունենք, որ և՛ քրիստոնեությունը, և՛ դրա վրա հանգչող կամ դրա հետ կապված հոգևոր մշակույթը ինքյան նույնպես

հանդիսանում էին քաղաքական գործողները և իբրև այդպիսիք քաղաքական վիթխարի դեր կատարեցին հայ ժողովրդի պատմության մեջ: Տարակուսելիք համարում միայն այն միտքը, թե ընդառաջելով Մաշտոցին հայոց թագավորը ելնում էր «արտաքին մաքառման» մտահղացումից և հատկապես Պարսկաստանին զիմադրելու քաղաքական հեռանկարից: Աղբյուրները որևէ հիմք չեն տալիս նման եզրակացության համար և որևէ առիթ՝ երկմտելու, թե Վռամշապուհը նպաստում էր զրեւրի գործին ելնելով հենց իր խնամքին հանձնված երկրի ներքին պետքերից, վարչական կամ մշակութային խնդիրներից: Նշենք հորենացու արձանագրած այն փաստը, որ երբ զրեւրի գործով Մաշտոցն անցել էր Ասորեստան, լրագավորը մեծ դժվարությունների մեջ էր ընկել, զրկվելով իր լավագույն խորհրդատուից ու թարգմանից: Հայրենի գիր ու դպրություն ունենալու անհրաժեշտությունը հայոց թագավորը կարող էր զգալ նաև ներքին այլ առիթներից մղված:

Վռամշապուհը աշխարհիկ միակ գործիչը չէր, որ ի վիճակի եղավ մերթնելու հայրենի զրեւրի գործնական հարգը կամ գիտակցելու նրա կարևորությունը երկրի քաղաքական ներքին պետքերի համար: Կորյունը հիշատակում է հայ իշխանական դասին պատկանած մի շարք մարդկանց, որոնք հովանի ու պաշտպան հանդիսացան Մաշտոցի գործունեությանը: Բայց նա ևս ոչ մի կրթվան չի տալիս եզրակացնելու, թե նրանք ելնում էին Պարսկաստանի կամ Բյուզանդիայի դեմ քաղաքականապես վահանավորվելու անմիջական մտահոգությունից կամ առ այդ երկրի քաղաքական ուժերը համախմբելու անմիջական կանխահոգությունից:

Հարկ է հիշել Մաշտոցին օժանդակող նախարարների շարքում Կորյունի հիշատակած Սյունյաց Վասակ իշխանին, որին նա դրվատում է որպես «խելացի ու հաճառեղ և կանխագետ, աստվածային իմաստության շնորհքով օժտված» մի մարդու: Շեշտենք, որ խոսքը Վարդանանց պատերազմում հանրահայտ զեր կատարած Վասակ Սյունեցու մասին է հենց:

Երբ է զրվել Կորյունի «Վարք Մաշտոցին»: Կան խոհուն ու աննախապաշար մտքի տեր բանասերներ, որոնք շեն բացարկում այն հնարավորությունը, թե Կորյունը կարող էր գրած լինել իր երկր 451 թ. անմիջապես հետո: Այս նշանակում է, թե վեր հանելով Վասակի «կանխագետ» միտքը, նա կարող էր աչքի առաջ ունեցած լինել հենց Վարդանանց ապստամբության կրած պարտությունը: Բոլոր պարագաներում այս հնարավորությունը նվազ անհավանական է թվում մեզ, քան այն ենթադրությունը, թե զրվատելով Վասակի կանխագետ խելքն ու հանճարը, Կորյունը նկատի էր ունեցել արքայից-արքաների պետության դեմ հայ ժողովրդին քաղաքականապես գոտեպնդելու մտահոգությունը: Ակնհերե է, որ Վասակի համար հայոց զրեւրը հանգիստանում էին քրիստոնեության տարածման կամ իր տիրույթի վարչական ու քաղաքական ներքին պետքերին անհրաժեշտ մի էիջոց:

*

Մաշտոցի ժամանակ և՛ պարսիկները, և՛ հույները Հայաստանի ու հայերի նկատմամբ հետամուտ էին համեմատաբար մեղմ քաղաքականության: Նրանք համաձուլողական ուղեգիծը տակավին չէր մտել սանձադերժված գործողությունների շրջանը: Թեպետ և յրանք հետևում էին հայ կյանքի ամեն մի խլրրտումը նախանձով ու կասկածամտությամբ՝ այնուամենայնիվ հայոց զրեւրի

նկատմամբ նրանք շունեցան խափանարար միջամտություն: Կարելի է կարծել նույնիսկ, որ հույների և պարսիկների փոխադարձ ներհակությունը և Հայաստանի մասին ունեցած նրանց սուր կասկածամտությունը որոշ իմաստով նույնիսկ նպաստեցին հայ գրերի ու գրականության արմատավորմանը:

Հայտնի է, որ նախապատվություն տալով իր հետ կապված ասորի քարոզիչների ազդեցությանը, պարսից արքունիքը կասկածոտ աչքով էր նայում հույն գրչության ու գրականության տարածմանը Հայաստանում: Իրենց հերթին հույները անհաշտորեն էին դիտում ասորական ազդեցության տարածմանը, նշմարելով դրա մեջ հայերի պարսկական կողմնորոշման վտանգ: Այս հանդամանքը չէր կարող հաշվի չառնել Մաշտոցը: Զգտելով վանել իր ժողովրդից և պարսիկների և թե հույների կասկածամտությունը, նա ջանաց ստեղծել հայոց լեզվի համար նշանագրեր, որոնք կախում չունենային ոչ հունական և ոչ էլ ասորական այբուբեններից, ունենային ազգային ինքնատիպ երևույթ:

Թարգմանված եկեղեցական գրքերը նվիրագործելու մտայնությամբ չէր սոսկ, որ Մաշտոցի աշակերտները գրերի գյուտը ներկայացնում էին որպես իրենց ուսուցչի վրա իջած վերնապարզ և շնորհ: Չէ՞ր տարածվում արդյոք այս վերսիան պարսիկների և հույների կասկածները կանխելու կամ դրանք փարատելու նպատակով: Երբ հույները տրտնջում էին, թե իրենց գիտնականների փոխարեն Մաշտոցը հնարել է իր գրերը ապավինելով ասորի գիտնականների օժանդակությանը, հայերը, ինչպես հավաստիացնում է Խորենացին, հետ էին մղում այդ մեղադրանքը մատնանշելով, թե իրենց գրերը ստացվել են ոչ թե ասորիների օգնությամբ, այլ երկնահորաշ տեսիլի շնորհիվ: Ինքը, Խորենացին հագիվ թե հավատում էր այդ առարկությանը, որչափ շեշտում էր, թե հայկական նշանագրերը Մաշտոցը գտել էր անձնատուր լինելով համառ աշխատանքի, շարշարվել էր փորձեր կատարելով և ի վերջո հաջողել գործը երկարատև ջանքերով Ասորաց աշխարհում:

Մաշտոցը գործում էր մի ժամանակ, երբ Հայաստանում պարսկական և հունական կողմնորոշումների մեջ օրորվող հայ նախարարները բնավ հետամուտ չէին երկրի քաղաքական միավորման: Միայն մաշտոցյան գրերի շնորհիվ ստեղծված և դրա միջոցով գոտեպնդված հայ ազգային-մշակութային ընդհանրությամբ է, որ նախարարական միջավայրում առաջացավ և հետզհետե ներգործոն ուժ դառնալով էապես նպաստեց արտաքին ագրեսիային քաղաքական-ազմական դիմադրության հանդիպադրելու գաղափարը:

«Արշակունյաց թագավորությունը» վերականգնելու մտասկզբումը ծնունդ առավ և աշխուժացավ հայ ժողովրդի տարբեր ծախքերում, երբ մաշտոցյան գրերի շնորհիվ սկզբնավորված հայ գրական մշակույթը արմատավորվել ու տարածվել էր արդեն՝ զարկ տալով երկրի տարբեր ծախքերում կալվածատիրական իշխանություն բանեցնող եկեղեցական կենտրոնի հեղինակությանը և այս դարձնելով նախարարների կենտրոնախույս տրամադրությունները հակակրճող քաղաքական ուժ: Հայալեզու եկեղեցական գրականությունն ու քարոզչությունը հնարավորություն տվեց հայ եկեղեցականներին հրաժարվելու ասորի և հույն դասակիցների գործակցությունից և ծավալել իրենց գործունեությունը բացառապես ազգակից եկեղեցականների վրա հենված: Հետագայում հայ եկեղեցին ազգային բնույթ ստացավ անգամ իր դավանաբանությամբ՝ սահմանելով ասորական եկեղեցու նեստորականությունից և հույն եկեղեցու քաղկեդոնականությունից:

Հիրավի, գրերի գյուտից հետո է, որ կազմավորվեց ու զարգացավ հայ գրչությունը, դպրոցը և դրական լեզուն՝ մեծապես ծառայելով հայախոս և հայագիր եկեղեցական դասի կազմավորմանը և նրա միջոցով ամրապնդելով հայ իշխող վերնախավերի ազգային-մշակութային կապերն ու ազգային-քաղաքական ինքնագիտակցությունը:

Արշակունյաց թագավորության վերացումից հետո պարսկական միջամրտումների ակտիվացմամբ Հայաստանի ներսում օրրստօրե սրվող քաղաքական ճգնաժամի պայմաններում հայ քրիստոնեական ուրույն մշակույթը դարձել էր արդեն երկրի քաղաքական համախմբման և ինքնապաշտպանության ամուր պատվարը: Եկեղեցականների ձեռքով ստեղծվում էր եկեղեցական-ֆեոդալական գաղափարաբանությամբ տոգորված գրական մի թագավորություն, որն իր նշանակությամբ ու դերով սկսում էր փոխարինել Արշակունյաց կործանված թագավորությանը, դառնալ երկրի քաղաքական ինքնորոշման գաղափարի կրողն ու արտահայտիչը:

Առանց գրերի գյուտին հաջորդած մշակութային այս հեղաշրջման անհնարին է պատկերացնել ֆեոդալական Հայաստանի այն պատմաշրջանը, որ նշանավորվեց Ավարայրի ճակատամարտով: Ավելի քան երեք տասնամյակ տևած համաժողովրդական այդ պայքարը հանգեց Հայաստանի համար նպաստավոր նվարսակի դաշնագրին:

Հայ ժողովրդի տարբեր խավերի մեջ ծայր առնող ազատագրական տրամադրություններն ու շարժումները առաջացան ու զարգացան հերոսական այն դիմադրության մթնոլորտում, որ հնարավոր դարձավ մաշտոցյան գրերի գյուտից հետո սկսված ու ծավալված մշակութային հեղաշրջման շնորհիվ:

Մեծ ու արգասավոր եղավ հայ ժողովրդի մտավոր և քաղաքական զարգացման մեջ Մաշտոցի ու նրա գործի պատմական կշիռը: Ընթյան արդեն գիտական մեծագործություն էր հայոց լեզվի հնչյունական կազմի նրա ձեռքով կատարված հայտնագործումն ու գրասևեռումը: Երա շնորհիվ արդեն իսկ V դարում ստեղծվեցին հայ ուրույն երկեր, որոնք խոշոր ներդրումներ էին հայ պատմագրության և փիլիսոփայության մարզում: Կարևոր ու արգասավոր եղավ նաև թարգմանչական վիթխարի այն աշխատանքը, որ նոր գրերի հիման վրա դասական կատարելությամբ գլուխ բերին Սահակ Պարթևը, Մաշտոցը և նրանց աշակերտներն ու հետնորդները:

Միջին դարերի հայ թարգմանիչները շհետևեցին իրենց հույն և լատին դասակիցներին, որոնք ստերջ մեծամտությամբ հրաժարվում էին դասեր առնել հին դարերի իմաստուններից: Աստվածաշնչի և եկեղեցական մատենագիրների կողքին թարգմանվեցին Արիստոտելի և Պլատոնի, Եվկլիդեսի, Զենոնի, Փիլոնի ու բազմաթիվ այլ հեթանոս հեղինակների երկերն ու հատրնտիրները: Կարևոր են հայկական թարգմանությունները մանավանդ այն պատճառով, որ փոխարինելու էին հետազայում կորուսված բնագիրներին: Այս առումով հույն, ասորի և այլ լեզուներից կատարված թարգմանությունների նշանակությունը գերաճելու էր հայագիտության նեղ սահմանները և ստանալու ընդհանուր պատմական արժեք: Իր գաղափարական բովանդակությունից անկախ՝ թարգմանական այդ գրականությունը իմացության մեծարժեք մի գանձարան է, որ աղբյուր դարձավ ստուգաբանական և սեմանտիկական բեղմնավոր հետազոտությունների ու եզրակացությունների՝ հնարավորություն ստեղծելով

համեմատության դնել հայերեն թարգմանությունների լեզուն համապատասխան սկզբնաղբյուրների հետ:

* * *

Դարերի իր հեռավորությունից հայ ժողովրդի այսօրվա երախտագետ սերունդներին Մաշտոցը հմայում է մեծարանքի ու դրվատման արժանի մարդկային իր նկարագրով:

Նա ասպարեզ իջավ մի ժամանակ, երբ, Փարպեցու պատկերավոր արտահայտությամբ, «Հայոց աշխարհը երկու ծվենի էր պատուվել որպես հին մի լաթ»: Ասհրաթեշտ էին հերոսական ջանքեր, որպեսզի ամրապնդվեին երկրի հոգևոր կարողությունները, որոնց օգնությամբ հայ ժողովուրդը հավաքեց վերստին ստեղծագործական իր ուժերը՝ պատմական առաջընթացի հետագա իր ուղին շարունակելու համար:

Մաշտոցը հանդես եկավ որպես հանճարեղ մի գործիչ, որ ապավինած հոգու իր անսպառ եռանդին ու կարողությանը առաջնորդեր իր ժողովրդին դեպի փրկումի մոտավոր ելքը: Անրնկճելի կամքի ու արթուն մտքի տեր մեկն էր այդ առաջնորդը, որ դառնալու էր իր ժողովրդի մեծագույն երախտավորը, նրա պատմական գոյատևությունը դարբնողներից մեկը, նրա մեծ ուսուցիչն ու դաստիարակողը: Պատահական չէ, որ իր ստեղծած նշանագրերով նա հարկ համարեց նախ և առաջ հայացնել Սողոմոն Իմաստունին վերագրված «Երբ առակացր»։ Ընթերցողի երևակայության առաջ Մաշտոցի թարգմանած անդրանիկ այդ երկը մեր առաջ վերականգնանցում է մեծ քարոզչի ու դաստիարակողի դիմաստվերը: Ակներև է զրեթե, որ ժողովրդական հնավանդ իմաստնությունների ու բարոյախոսությունների այդ մատյանը պիտի օժանդակեր նախ և առաջ հենց իր, Մաշտոցի քարոզչական և դպրոցական գործունեությանը: Զուր չէր Կորյունը «աշակերտասեր վարդապետ» անվանում նրան: Նա էր, անշուշտ, իր շուրջը հավաքված գրիչների ու թարգմանիչների, քարոզիչների ու դասատուների անդրանիկ հրահանգողը: Խորենացին բնութագրեց նրան «սիրով անկեղծ, ուսուցանելիս անձանձրույթ» բառերով՝ հարելով, թե իր աշակերտներին նա ոչ թե սովորեցնում էր որպես արվեստ, այլ կարծես թե հոգի էր ներշնչում նրանց իբրև առաքյալ: «Քանզի ոչ որպես զարուեստ ուսուցանէր, այլ իբրև զհոգի առաքելաբար տայր»: Զի՞ վկայում արդյոք այս բնութագրության օգտին նաև Մաշտոցին վերագրված «Հաճախապատումը» իր «հարուստ ու խորիմաստ գաղափարներով, դիպուկ պատկերներով ու համեմատություններով և հրաշունչ հորդորականներով» (Ֆետտեր): Մաշտոցի առաքելական շնչի ամուր դրոշմն են կրում նրա աշակերտների ձեռքով շարադրված V դարի հայ մատյաններից շատերն իրենց պայծառ ու վճիտ ոճով, իրենց հրաշունչ խոսքի գործությամբ:

Չարաշար սխալվում են բանասերներից ոմանք, երբ Մաշտոցի մեծության գաղտնիքը որոնում են նրա «ներանձնական կյանքի» մեջ: Մաշտոցի ճգնություն մասին Կորյունի հաղորդածը իրավունք չի տալիս նրան պատկերացնելու բարեպաշտ ներհայեցության մեջ սուզված մենակյացի կամ մարդախույս ու աշխարհամերժ իմաստասերի դերում: Ծգնությունը Մաշտոցի կյանքում կարճատև մի ժամանակամիջոց էր, ընկած նրա գինվորական ու պետական ծառայության և քարոզչական ու մշակութային այն գործունեության մեջ, որ սերունդների գիտակցության մեջ նրա մեծության և անմահության միակ աղբյուրն է

իրոք: Գրերի գյուտի հետ կապված նրա գիտական պրպտումները, ուղևորութիւններն ու բանակցութիւնները բազմաթիւ եկեղեցական ու պետական գործիչներէ հետ, որոնց մասին պարզ ու որոշակի վկայութիւններ կան Կորյունի դրքում, փաստապես հերքում են ու ավերում Մաշտոցի «ներանձնական կյանքի» մասին հատուկ հոգատարութեամբ հրամցվող սխալ պատկերացումները: Մաշտոցը ապրել է ու տքնել, խորհել է ու ստեղծագործել որպէս հայ ժողովրդի ու մշակութի համար մղված մարտերի ղեկավար, որ ոչ միայն բանիւ, այլև գործով էր մաքառում իր և իր համախոհների ու գործակիցների հավաքական ձգտումներն ու նպատակադրումները իրագործելու համար:

Կա վկայութիւն այն մասին, որ Մաշտոցի գործունեութիւնը սահմանափակված չմնաց նույնիսկ հայ ազգային կյանքի նեղ սահմանների մէջ: Նկատի ունենք Կորյունի գրքում հանգիպող այն վկայութիւնները, որոնք նրա գործունեութիւնը կապում են վրաց ու աղվանից գրերի սկզբնավորման հետ: Կկամենայինք միայն մատնանշել կաշկոր այն հանգամանքը, որ հայ-վրացական կամ հայ-աղվանական գրական ու մշակութային սերտ կապերի մասին եղած վկայութիւնները եզակի չեն և ոչ էլ դիպվածական: Բավական է նշել, որ վրացական Աստվածաշունչը թարգմանված է հայերենից, կամ որ հայոց չեզովով է գրվել Աղվանից երկրի պատմութիւնը և վրացերենից է թարգմանված Զեվանշերի վրաց պատմութիւնը:

Անդրկովկասյան ժողովուրդների պատմութեան անիվը թափալվում էր համաշխարհային ընթացքով և նրանց կյանքի շրջադարձային իրողութիւնները նաեւս հանդուցաւորվում էին նրանց եռանդ ու հեռանկար հայթայթող համերկրային նախաձեռնութիւնների ու գործողութիւնների մէջ: Ակներև է, որ հարևան ժողովուրդների գրերի հարցը կապված էր Մաշտոցի գործունեութիւնը զսպանակող քրիստոնեութեան պրոպագանդման ու տարածման խնդրի՝ ներկա դեպքում՝ հեթանոսութեան դեմ հարևան քրիստոնյա ժողովուրդների հետ միասնական զաղափարական ճակատ հարգարելու մտահոգութեան հետ:

Այս տեսակետից իր վրա ուշադրութիւն է հրավիրում այն, ինչ գրում է Կորյունը վրաց գրերի գործում Մաշտոցին ոգեշնչած նպատակի մասին: «Նվարդ՝ նրանց, որ այնքան առնչեցին ու բաժանված լնգուներից ժողովկեցին, մեկ աստվածային պատգամներով կապեց, հարձրեց մեկ աղղ, մեկ աստծու փառաբանիչներ»:

Ազգութեան զաղափարի միջնադարյան ընկալման համար վերին աստիճանի հետաքրքրական և ուշագրավ են այս տողերը: Դրանք, մասնավորապէս, սպառիչ հասկացողութիւն են տալիս նաև Կորյունի նշած «աշխարհոգ» այն գործունեութեան մասին, որ ծավալեց Մաշտոցը տարբեր տիրապետութիւնների ու տիրութեանների ներքո ղեկերող տարբեր բարբառների տրոհված և տարբեր բարբերով ու հավատալիքներով մասնատված իր ժողովրդի ազգային ընդհանրութիւնն ու միասնութիւնը կոփելու համար:

* * *

Մաշտոցյան գրերը ոչ միայն օգնեցին հայ ժողովրդի գրական ուրույն մշակութի առաջացմանը, այլև հարակա գործոն դարձան այդ մշակութի ստեղծող ժողովրդի զարգացման համար մղված բազմադարյան պայքարի մէջ:

Գրերի գյուտից հետո ավելի քան մեկ ու կես հազարամյակի ընթացքում հայ ժողովրդի կյանքը անցել է զարգացման մի քանի փուլերից: Սակայն հայ

ժողովրդի պատմության անիվը առաջ է շարժվել մաշտոցյան գրերի կիրառման հետ համընթաց և այդ գրերի վրա հանգչող գրական բազմահարուստ ժառանգության մշակման ու տարածման հետ միաժամանակ:

Հարկավ, դասակարգերն ու սերունդները միևնույն տեսանկյունով ու նպատակադրությամբ չեն մերձենում պատմական ժառանգության արժեքավորմանը, կամ միևնույն ծավալով ու կարողությամբ օգտագործում անցյալից ստացածը՝ նրա ժողովրդայնությունն ապահովելու կամ այն առավել կենսունակ ու այժմեակ էն դարձնելու համար: Հարգազման նւթա-տնտեսական տարբեր նախադրյալների կամ հասարակական-քաղաքական տարբեր հարաբերակցությունների և րմբոռումների համեմատ տարբեր պիտի լինեն նաև իր հետնորդներին Մաշտոցի կտակած ժառանգության հերն ու նշանակությունը:

Մաշտոցի մահից շուրջ կես դար անց Փարպեցին բնութագրում էր Հայաստանը որպես բազմաբնակ ու բարեբեր մի աշխարհ: Մարգարանական Հայաստանում ընդարձակվել էր վանական դպրոցների ցանցը, բարձրացել գրի ու գրականության նշանակությունը, աճել դպրոցների ու գրիչների թիվը: Այդ ժամանակ հայագիր էր դարձել նաև Արևմտյան Հայաստանի ու Կապադովկիայի հայ վերնախավը:

Սակայն երկրի տնտեսական ու քաղաքական վիճակը նեղ սահման էր դրածում հայ գրի ու գրականության զարգացման առաջ: Մաղաղաբյա մատյանները ազդվածությամբ էին ու չավազանց լիանկ: Գրանցից յուրաքանչյուր օրինակի համար պահանջվում էր հատուկ գրիչ: Երբ և գրականությունը ծաղկում էին հարուստ վանքերի մեջ, կամ հարուստ մեկենասների ձեռնտվությամբ: Հասկանալի է, թե որքան կարճ պիտի լինեն գրքի տարածման կամ նրա յուրացման հասարակական շառավիղը: Գրագիտությունը մատչելի կարող էր լինել պրեթե միայն եկեղեցական կամ ազնվական բարակ վերնաշերտին: Այն կարող էր ընդառնալ միայն նրանց հայացքներին ու ծառայել նրանց նպատակներին: Ժողովրդական բանավոր մտքի ու ստեղծագործության առաջ վաղ միջնադարյան գրականության դոները գրեթե զոցված էին երկաթե փականքներով:

Հստ էության քիչ բան փոխվեց, երբ թանկարժեք մագաղափն իր տեղը գիջեց ռոսից ներմուծվող համեմատաբար դյուրագին, բայց դարձյալ սակավամատչելի թղթով: Մեսրոպյան երկաթագրերի տեղը բռնեց նախ միջին երկաթագիրը և փոքր-ինչ հետո՝ բոլորագիրը: Դրանով համեմատաբար դյուրացավ գրքի ստեղծումն ու նրա տարածման գործը: Այնուամենայնիվ, գրականության սանձը շարունակում էին իրենց ձեռքում ամուր պահել նրա հին տերերը:

Մի հայտնի չափով գրականության և դրա հետ մեկտեղ դպրոցի և գիտության դործը ազատվեց եկեղեցու հոգածությունից, երբ սկսվեց հայկական պաշտությունը, որի պատմության 450-ամյա շրջանը լրանում է մեր օրերին: Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի հետ միաժամանակ: Տպագիր գրքի տարածման շրջանն ընդլայնելու հետ մեկտեղ պայքար է սկզբնավորվում նաև նրա աշխարհիկ բովանդակությունն ընդարձակելու ուղղությամբ: Համառ ու տևական ջանքերով է միայն, որ հայ կյանքի և գրականության մեջ սկսում է տեղափոխվել պատմական լուրեր: Բն ապրող բուրժուազիայի առաջավոր միտքը: Հաղթահարվեց միջին դարերի հայ գրական թագավորության ֆեոդալ-եկեղեցական դադափարախոսությունը: Ասպարեզ բացվեց աշխարհիկ լեզվի ու մտածության, աշխարհիկ դպրոցի ու գիտության, պարբերական մամուլի ու հեռախոսակախոսության համար: Այդ դարի կեսերից հետո Մաշտոցի հանձա-

րեղ հղացքը գործիք դարձավ հայ նոր գրական լեզվի, բուրժուական-դեմոկրատական աշխարհայացքի հռչակման, դարձավ միջոց հանուն լույսի և ազատության և ի վերջո հանուն հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման արժարժվող գաղափարների հաստման:

Կտրելով հազարամյակների ճանապարհը մաշտոցյան հանճարի շառայլը միայն լենինյան մեր դարաշրջնում է, որ հասավ ամբողջ հայ աշխատավորության գիտակցությանը և լուսավորեց նրա պայքարի ու ստեղծագործության ուղին: Միայն Մեծ Հոկտեմբերից հետո և Մեծ Հոկտեմբերի շնորհիվ է, որ մեր երկրում իրողությունը դարձավ հայ ժողովրդի համատարած գրագիտությունը և հայ մտքի ու գրչի վաստակը դարձավ հայ աշխատավոր մարդու սեփականությունը:

Ձի կարելի նաև հերքել այն իրողությունը, որ մաշտոցյան գրերը գործադրության մեջ մտնելու ժամանակներից ի վեր հայ գրական խոսքը երբեք տառածված չի եղել այնպիսի ծավալով և չի արտասանվել այնպիսի հնչեղությամբ, ինչպես մեր օրերին՝ Սովետական Միության մեջ:

Դիտենք, որ գրականության ու գիտության որակը չի չափվում հրատարակվող գրքերի քանակով կամ նրանց տարածման ու յուրացման ծավալով: Բայց և չենք կարող անգիտանալ այն իրողությունը, որ ներկա դեպքում մաշտոցատառ հայերենով հրապարակվում ու տարածվում են դասական գործեր կամ մեծարժեք արդիական աշխատություններ, որոնք ընդառաջում են մեր դարաշրջանի առաջավոր գաղափարներին և լուսաբանում դրանց կենսագործման համար մեր ժողովրդի մղած պայքարի խնդիրները: Եթե իր ժամանակին մաշտոցատառ գիրքը գործիք հանդիսացավ մշակութային ռեվալյուցիան, լենինյան մեծ դարաշրջանում այն լայն ճանապարհ բացեց մեր ժողովրդի հասարակական կեցության ու նրա գիտակցության մեջ կատարվող մշակութային հեղափոխության:

«Ճանաչել գիմաստություն և գիտատ, իմանալ գրանս հանճարոյ»:
Այս հրահանգով ծնվեց մաշտոցյան գրերով դրոշմված հայ անդրանիկ խոսքը:

Սակայն, այս հրահանգը չէր կարող հասնել հայ աշխատավոր զանգվածների գիտակցությանը, կամ իրագործվել ի շահ նրանց մշակույթի, քանի որ երբեք ու գրականությունը շարունակում էին լինել: Հայ իշխող դասակարգերի, այդ թվում նաև հայ բուրժուական վերնախավի մենաշնորհը:

Քննաբար առինքնել ու մշակել հայ ժողովրդի բազմադարյան մշակութալին վաստակը և համամարդկային գրականության ու գիտության բովանդակ հարստությունը ի շահ հայ ժողովրդի և երկրագնդի վրա խաղաղություն և Աշխատանք, Ազատություն և Եղբայրություն, Հավասարություն և Երջանկություն հաստող ժողովուրդների, այս է այն իմաստն ու բաղձանքը, որ կառուցվող կոմունիզմի համար պայքարող հայ ժողովուրդը կկամենար բացահայտել այժմեաբար մաշտոցյան հայերենով և մաշտոցյան գրչով դրոշմված բիրիական հին այդ իմաստության մեջ, որով սկսվեց հայ գրչության ու գրքի պատմական կյանքն ու նրա երթը:

ИСТОРИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ПИСЬМЕН МАШТОЦА

Академик АН Арм. ССР А. Г. ИОАННИСЯН

(Резюме)

Что стимулировало творческую деятельность Маштоца и какова была его роль в исторических судьбах армянского народа?

В дни празднования знаменательной для нашего народа даты эти вопросы занимают не только историков Армении, но и всех трудящихся нашей страны.

Результаты деятельности Маштоца столь же многообразны, как и исторические судьбы армянского народа, и нет сомнения в том, что возникнув в начале V века, армянская письменность создала предпосылки для роста политического самосознания нашего народа.

В результате внедрения национальной письменности укрепились духовная общность между политически разобщенными территориями феодальной Армении, что стало одним из решающих факторов, поднявших армянский народ на освободительную борьбу против персидских и византийских захватчиков.

Нельзя, однако, исходить из исторических результатов деятельности Маштоца и его современников, если ставишь задачу выяснить причины изобретения армянских письмен или обрисовать историческую обстановку, в которой возникла письменность. Нельзя, не нарушив исторической перспективы, перекинуть события и идеи последующих десятилетий и веков в эпоху Маштоца, пытаясь таким образом понять цели и задачи, которые ставил себе Маштоц, создавая национальный алфавит и закладывая основы национальной письменности.

Анализ древних источников, повествующих о жизни и деятельности Маштоца, показывает, что он и его сподвижники рассматривали создание национальной письменности прежде всего как средство для внедрения в страну христианства и идеологического сплочения народа вокруг национальной церкви, освобожденной из-под чуждой ее интересам опеки сирийских и греческих проповедников.

В дальнейшем, на протяжении V—VII веков, по мере углубления процесса феодализации армянских территориальных владений, активизации церковной и светской знати и ожившей в этой среде тенденции к национальному объединению и самоопределению господствующего класса, усилия последнего, направленные на восстановление политической независимости страны, влились в общее русло с процессом ее культурного объединения.

Как бы ни была велика и значительна историческая роль армянской письменности для сохранения этнического лица и национальной независимости армянского народа в целом, не может быть сомнения в том, что благами происшедшего в V—VII веках культурного переворота в Армении непосредственно воспользовалась лишь господствовавшая церковно-феодалная верхушка.

Известный перелом в этом отношении наметился лишь позднее, в XVI—XVII веках, с развитием армянского книгопечатания. По мере появления на исторической арене армянской буржуазии и усиления ее общественной роли, развертывалась борьба за расширение светского содержания печатного слова и раздвинулись пределы его распространения. Постепенно преодолевалось церковно-схоластическое содержание литературы, освобождалась арена для внедрения в нее светского мышления.

В конце XVIII века возникает армянская периодическая печать и публицистика. С середины XIX века изобретение Маштоца становится средством для создания и распространения нового литературного языка, утверждения буржуазно-демократической идеологии и пропаганды национально-освободительных идей.

Однако луч маштоцевского гения проник в толщу армянского народа и стал освещать путь его подлинного освобождения лишь с появлением на исторической арене армянского рабочего класса. Благодаря победе Октября, Армения превратилась в страну сплошной грамотности, и многовековое наследие армянской литературы стало достоянием ее трудящихся.

Если в историческом прошлом созданные Маштоцом письмена явились лишь орудием *культурного переворота* в интересах господствующих верхах нации, в нашу эпоху они стали мощным орудием *культурной революции* — важнейшего условия для перехода к развернутому строительству коммунизма.